

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի
մայիսի 4-ին ZOOM հարթակում կայացած առցանց Գիտական Խորհրդի N8 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 31-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի հաստատումը

/զեկ.փոխդեկան Ս.Ս.Քելյան/

2. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների կազմակերպումը
ֆակուլտետում

/զեկ.փոխդեկան Ս.Ս.Քելյան/

3. 2019/2020 ուստարվա քննությունների լուծարքային շրջանի արդյունքները

/զեկ.փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/

4. 2020/2021 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական
պլանների քննարկում

/զեկ.ամբիոնի վարիչներ/

5. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգը հաստատվեց

1. **ԼՄԵՑԻՆ.** Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղոդրումը **ամփոփիչ ատեստավորման
քննությունների ժամանակացույցի** վերաբերյալ: Նա մանրամասն ներկայացրեց
ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության
ժամանակացույցն ըստ մասնագիտությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ներկայացված ժամանակացույցը

2. ՀՄԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների կազմակերպումման վերաբերյալ: Նա նշեց, որ բոլոր մասնագիտություններով նախապաշտպանությունները կազմակերպվում են առցանց, մասնավորապես՝ Moodle/Zoom հարթակներում: Այդ գործընթացը կարգավորվել է ծրագրի պատասխանատուների և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցների համատեղ ջանքերի արդյունքում: Ս.Քելյանը նշեց նաև որ իրականացվել են բոլոր միջոցառումները մագ.թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունը նույն կերպ իրականացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ՀՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը **2019/2020 ուստարվա քննությունների լուծարքային շրջանի արդյունքների** վերաբերյալ: Նա ներկայացրեց, որ լուծարքային շրջանի ավարտից հետո առարկայական պարտք ունեցող ուսանող չկա, սակայն կան ուսանողներ, ովքեր ունեն մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքեր: Դրանք վերահանձնելու նպատակով կազմվել է ժամանակացույց ըստ որի կկազմակերպվեն վերահանձնումները: Ելույթում Վ.Վարդանյանը խոսեց չվճարած ուսանողների մասին, որոնցից 6 ուսանողի հետ կապ հաստատել հնարավոր չի եղել:

ՀԱՐՑ ՏՎԵՑԻՆ. 1 ուսանող նախկինում սովորել է պպ համակարգում, որից հետո փոխել է մասնագիտացումը: Արդյո՞ք այդպիսով նա տեղափոխվում է վճարովի համարագ,- հարցրեց Անին

Պատասխան. – Այո, նա վճարելու է,-պատասխանեց Մ.Գրիգորյանը

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ՀՄԵՑԻՆ. Ամբիոնի վարիչների հաղորդումը **2020/2021 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների** վերաբերյալ: Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ

դոց.Պ.Գ.Դավթյան նշեց, որ կազմվող 2020-2021 ուս.տարվա ուսումնական պլանն արդեն կազմված է: Այն կազմվել է ուսումնական վարչության կողմից պահանջվող նորմերին համապատասխան: Մերվիսի ամբ.վարիչ Ս.Ռ.Սուվարյանը նույնպես նշեց, որ 2020-2021 ուս.տարվա ուսումնական պլանի կազմումն իրականացվում է նորմերին համապատասխան, սակայն կան որոշակի տեխնիկական խնդիրներ, որոնք կապված են Supervision ծրագրի <Ուսումնական պլաններ> հատվածի ծրագրավորող մասնագետի գերզբաղված լինելու հետ: Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Ա.Թ.Գրիգորյանի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ Վ.Գրիգորյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ.վարիչ Ս.Հ.Հայրոյանի, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ Շ.Վ.Խաչատրյանի ելույթներից պարզ դարձավ, որ 2020-2021 ուս.տարվա ուսումնական պլանի վերջնական տարբերակները հնարավոր կլինի ներկայացնել ուսումնական վարչության կողմից ուսանողների թիվը ներբեռնելուց հետո միայն: Երկրաֆիզիկայի ամբ.վարիչի պաշտոնակատար Մ.Ս.Մկրտչյանն իր ելույթում հայտնեց, որ Երկրաբանություն մասնագիտության ծրագրի ղեկավարի կամայական գործողությունների պատճառով իրեն չի ներկայացրել 2020-2021 ուս.տարվա ուսումնական պլանների կազմման նախագիծը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանը և նշեց, որ անհրաժեշտ է միասնական աշխատել առավել ևս եթե խոսքը վերաբերում է մեկ ընդհանուր մասնագիտական ուսումնական պլանի: Ելույթի ավարտին Մ.Գրիգորյանն առաջարկեց, որպեսզի ամբիոնի վարիչները 3 օրյա ժամկետում ավարտեն ուս.պլանների կազմումը և ներկայացնեն դեկանատ:

ՈՐՈՇԵՑԻՆ. մայիսի 7-ին ամբիոնների կողմից 2020-2021 ուս.տարվա ուսումնական պլանները ներկայացնեն դեկանատ

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վահագն Գրիգորյանի հաղորդումը <Տարածաշրջանագիտություն> կրթական նոր ծրագրի ստեղծման վերաբերյալ: Վ.Գրիգորյանը մանրամասնորեն ներկայացրեց ներկայացվող ծրագրի անհրաժեշտությունը և ժամանակի պահանջը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վահագն Գրիգորյանի կողմից արաջարկված <Տարածաշրջանագիտություն> կրթական ծրագիրը և երաշխավորել այն ուսումնական վարչություն ներկայացնելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան